

տանութեան՝ զի գութ մեծ ունէր ի վերայ մեր, յաւուր միում առանձինն ազդեցի նմա, թէ առ ի չկորուսանել զվարձս հալածման քո յազգէն, եւ առ ի չտալ կարծիս՝ թէ վասն հաճոյանալոյ մեզ որպէս կատարեալ ուղղափառ՝ գանգատես զազգէդ, բարւոք լինի՝ եթէ չափաւորես ջիբ զբանսդ: Առ այս շնորհս կալաւ յոյժ եպիսկոպոսն, եւ օրհնեաց ի սրտէ վասն ազդելոյ նմա զկարեւորս. այսպէս բարի օրինակ էին գնացք նորա: 7

Սակայն Ղենետիկի օգն իրեն չյարմարեցաւ. 1790 Հոկտ. ին Թրիեստի Մխիթ. Հայրերուն կը գրէ (Գիւ. Մխիթ. Ղիննայ), թէ կ'ուզէ Թրիեստ բնակիլ, առանց մէկու մը ծանրութիւն ըլլալու. եւ որովհետեւ յաջորդ տարւոյ մինչեւ Մարտ ամիսը տան վարձքը վճարած է, հետեւեալար Ապրիլին անպատճառ կը մեկնի մինչեւ այն ատեն գործը գաղտնիք մնայ: Ահա բնագիրը.

Հասցէն՝ «Հասցէ գիրս ի քաղաքն Թրիեստ ի սուրբ ձեռս հայ աստուածատուր աստուածարան վարդապետին ի վանս սրբոց մարտիրոսացն բարեաւ հանդերձ անլոյծ կնքով. Գերամեծար եւ յարցանկալի եղբարցդ իմոց եւ սրբասուն կրօնաւորացդ. հայր աստուածատուր եւ հայր կոմիտաս լիաշնորհ. բարունեացդ ըզձատենչ սիրով սէր եւ ողջոյն ընծայեմ լերուք ողջք. ի յամայր ամս շտ. է ինձ: 7

«Եւ զկնի յայտ առնեմ նազելի եղբայրցդ իմոց որ տրուպս ըստուգիւ չու առնելոց եմ աստի սակս դառնութեան օգոյ տեղոյս որ օր մի ոչ տայ թոյլ թարց խօթութեան անցուցանել. երկնչիմ եթէ մի գուցէ առաջ քան զօրհանս իմ կենցրաւ արասցէ զիս. 7